ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___._____ 2020 թվականի N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ /ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ ԵՎ ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում 2020/2021 ուսումնական տարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ՝
   1) կլինիկական օրդինատուրայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների՝ համաձայն NN 1,2,3 և 4 հավելվածների,
   2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համար նախատեսված ինտերնատուրա ընդունելության 50 տեղ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված 1

ՀՀ կառավարության

« »..... 2020թ. N ..... որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Քանակ
Ինֆեկցիոն հիվանդություններ	2
Մանկական ինֆեկցիոն հիվանդություններ	1
Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	4
Մանկական անեսթոզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	3
ԸՆԴԱՄԵՆԸ	**10**

Հավելված 2

ՀՀ կառավարության

« »..... 2020թ. N ..... որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՀ առողջապահության նախարարություն

Մասնագիտություն	Քանակ
Լաբորատոր ախտորոշում	2
Ընդհանուր վիրաբուժություն	2
Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	8
Ակնաբանություն	1
Մանկաբարձություն և գինեկոլոգիա	1
Քիթ-կոկորդ-ականջաբանություն /**օտորինոլարինգոլոգիա**/	2
Նյարդաբանություն	3
Ուրոլոգիա	1
Ընտանեկան բժշկություն	6
Հոգեբուժություն	1
Մանկական հոգեբուժություն	1
Մանկաբուժություն	3
Նեոնատոլոգիա	2
Ներքին բժշկություն	4
Ինֆեկցիոն հիվանդություններ	3
Վնասվածքաբանություն և օրթոպեդիա	1
Ճառագայթային ախտորոշում	4
Սրտաբանություն /**կարդիոլոգիա**/	3
Ներզատաբանություն /**էնդոկրինոլոգիա**/	2
Շտապբուժօգնություն	2
Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա	2
Համաճարակաբանություն	2
Դատաբժշկական փորձաքննություն	1
Մեղրիի հատկացվող տեղեր	1
ԸՆԴԱՄԵՆԸ	**58**

Հավելված 3

ՀՀ կառավարության

« »..... 2020թ. N ..... որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Արցախի Հանրապետություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	**Քանակ**
Ռևմատոլոգիա	1
Երիկամաբանություն **/նեֆրոլոգիա/**	1
Ներքին բժշկություն	2
Աղեստամոքսաբանություն **/գաստրոէնտերոլոգիա/**	2
Սրտաբանություն **/կարդիոլոգիա/**	4
Ճառագայթային ախտորոշում	4
Ներզատաբանություն **/էնդոկրինոլոգիա/**	1
Քիթ-կոկորդ-ականջաբանություն **/օտորինոլարինգոլոգիա/**	1
Մանկական հոգեբանություն	1
ԸՆԴԱՄԵՆԸ	**17**

Հավելված 4

ՀՀ կառավարության

« »..... 2020թ. N ..... որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ /ԱՆՎՃԱՐ/, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	**Քանակ**
Սրտաբանություն **/կարդիոլոգիա/**	1
Ներզատաբանություն **/էնդոկրինոլոգիա/**	1
Ներքին բժշկություն	1
Քիթ-կոկորդ-ականջաբանություն **/օտորինոլարինգոլոգիա/**	1
Հոգեբուժություն	1
Ճառագայթային ախտորոշում	5
ԸՆԴԱՄԵՆԸ	**10**

Հիմնավորում

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Անհրաժեշտությունը.

Նախագիծն ընդունվում է «Կրթության մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Արցախի Հանրապետությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ներկայացրել են առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ինտերնատուրայի և կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրերով իրենց հայտերը՝ հաշվի առնելով Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համաճարակային իրավիճակը, առողջապահական համակարգի ներկայիս ու ակնկալվող կադրային պահանջարկը, մարզային առողջապահական կազմակերպությունների կադրային բացը լրացնելու, Երևանի՝ կադրային գերհագեցած համակարգը բեռնաթափելու հարցը և ՀՀ զինված ուժերում ներկայիս և ակնկալվող կադրային պահանջարկը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Արցախի Հանրապետությունից, ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ առողջապահության նախարարությունից և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամից ստացված հայտերի հիման վրա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն ըստ մասնագիտությունների ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ հատկացված կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի ընդունելության տեղերը**:**

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրով ուսումնառության անվճար տեղերի հատկացումը նպատակ ունի կանոնակարգել բարձրագույն ուսումնական հաստատությունում առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի ընդունելությունը, ինչպես նաև նպաստել բժշկական կադրային ներուժի պատրաստմանն ու ՀՀ զինված ուժերում առկա բժիշկ-սպաների և մարզային առողջապահության կադրային պահանջարկի համալրմանը:

Կլինիկական օրդինատուրայում տեղերի հատկացումը հնարավորություն է ընձեռում

ապահովել շարունակական կրթությունը, ինչպես նաև առողջապահության համակարգում ներկա համաճարակային իրավիճակով պայմանավորված առանցքային մասնագիտություններով բժիշկ-մասնագետների փոխարինելիությունն ու բժշկական օգնության և սպասարկման մատուցման կայունությունը:

Ինտերնատուրայում տեղերի հատկացումը նախատեսում է կարգավորել ՀՀ զինված ուժերում առկա բժշկական կազմի թերհամալրվածության խնդիրը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Արցախի Հանրապետություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ:

6. Ակնկալվող արդյունքը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նախատեսում է 2020/2021 ուսումնական տարվա համար պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի կրթական ծրագրերով ուսումնառությունը կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել կլինիկական օրդինատուրայի համար 95 տեղ, որից 17-ը՝ Արցախի Հանրապետությանը, 10-ը՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին, 58-ը՝ Առողջապահության նախարարությանը, 10-ը՝ Պաշտպանության նախարարությանը և 50 տեղ ինտերնատուրայի համար:

Տեղեկանք

«2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի /ըստ մասնագիտությունների/ և ինտերնատուրայի ընդունելության տեղերն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

«2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի /ըստ մասնագիտությունների/ և ինտերնատուրայի ընդունելության տեղերն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Ամփոփաթերթ

«2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ

կլինիկական օրդինատուրայի /ըստ մասնագիտությունների/ և ինտերնատուրայի ընդունելության տեղերն հաստատելու մասին»

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ ֆինանսների նախարարություն Հուլիսի 16-ի թիվ 01/8-3/10515-2020 գրություն	Նախագծով, ՀՀ պաշտպանության նախարարության մասով, կլինիկական օրդինատուրայի ընդունելության անվճար տեղերը 7-ով ավել են նախատեսվել ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված ծրագրային ցուցանիշների հաշվարկների հիմքում դրված ընդունելության անվճար տեղերի թվից: Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ ներկայացված ընդունելության տեղերի ավելացումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի կատարման անհրաժեշտության, ինչպես 2020 թվականին 1.9 մլն դրամի, այնպես էլ հետագա տարիներին 5.7 մլն դրամի չափով, ինչից առաջարկում ենք ձեռնպահ մնալ:	Դիտողությունը ընդունելի է:	Նախագծում կատարվել է փոփոխություն:
	Առաջարկում ենք Նախագծի հիմնավորմամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Նախագծով բացահայտել և/կամ որոշակիացնել, թե ինչ սկզբունքներով և մոտեցումներով են սահմանվում (ընտրվում) և բաշխվում Ընդունելության տեղերը, ըստ. 1. մասնագիտությունների՝ այդ թվում պետության համար առաջնահերթ և կարևորություն ունեցող ոլորտների,	Դիտողությունը ընդունելի է:	Նախագծի հիմնավորումը լրացվել է հետևյալով՝ 1. ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվող նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերը հատկացնելիս հաշվի է առնվել ՀՀ առողջապահության բնագավառում առկա բժշկական կադրային ներուժի պատրաստման, նրանց օպտիմալ և տարածքային համաչափ բաշխման խնդիրները: ՀՀ Պաշտպանության նախարարության տեղերը հատկացնելիս հաշվի է առնվել ՀՀ զինված ուժերում առկա բժշկական կազմի թերհամալրվածության խնդիրը և ապահովել ինտերնատուրայում նրանց ուսուցումը շարունակելու հնարավորությունը: Արցախի Հանրապետությանը տեղեր հատկացնելիս՝ հաշվի է առնվել Արցախի Հանրապետությունում որոշ մասնագիտությունների գծով բժիշկների սուր պահանջարկը: Երևանի Մ. Հերացու անվան

			պետական բժշկական համալսարանին տեղեր հատկացնելիս հաշվի է առնվել առողջապահության համակարգում ներկա համաճարակային իրավիճակով պայմանավորված առանցքային մասնագիտություններով բժիշկ-մասնագետների պատրաստման կարևորությունը, ինչպես նաև համալսարանի սովորողների բարձր առաջադիմությունը:
	2. Շահառուների՝ Արցախի Հանրապետության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության		2. Տեղերի բաշխումը պայմանավորված է շահագրգիռ կողմերի ներկայացվող հայտերի հիման վրա ՝ հաշվի առնելով նրանց համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտությունները:
	3.Նախագծի 2-րդ կետում նշված թափուր մնացած տեղերի՝ ընդգծելով վերջինների սահմանման նպատակահարմարությունը և տարվա ընթացքում այդ տեղերի վերաբաշխման սկզբունքները,		3. Կլինիկական օրդինատուրայի առկա ուսուցմամբ թափուր մնացած տեղերի վերաբաշխումը պայմանավորված է ընդունելության ժամանակ առաջացած մրցույթի արդյունքում հավասար միավորներ ունենալու դեպքում տեղերի բաշխման նպատակով և բաշխումն իրականցվում է ընդունելության մրցույթի անցկացմանը զուգընթաց՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, Արցախի Հանրապետության և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից ներկայացրած լրացուցիչ հայտերի՝ իրենց տրամադրված տեղերի շրջանակներում:
	4. ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթությունների և քաղաքականության թիրախների		4 .Ընդունելության տեղերը ձևավորելիս հաշվի են առնվել ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության կողմից ներկայացված հայտերը՝

			ելնելով ոլորտի առաջնահերթությունից և թիրախներից: Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանին հատկացվող տեղերը հնարավորություն է ընձեռում ապահովել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների շարունակական կրթությունը անհրաժեշտ մասնագետներով:
ՀՀ առողջապահության նախարարություն Հուլիսի 13-ի թիվ ԱԹ/05/15754-2020 գրություն	Առաջարկում եմ նախագծի հավելվածով հաստատվող ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվող տեղերի ցանկում «դատաբժշկական հոգեբանություն» մասնագիտությունը փոխարինել «դատաբժշկական փորձաքննություն» մասնագիտությամբ: Միաժամանակ, առաջարկում եմ «նյարդաբանություն» մասնագիտությանը հատկացվող տեղերից մեկը տրամադրել «ուրոլոգիա» մասնագիտությանը:	Առաջարկությունն ընդունելի է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ արդարադատության նախարարություն Հուլիսի 29-ի թիվ 01/27.1/16763-2020 գրություն	1. «Հայաստանի Հանրապետությունում 2020/2021 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձեվով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի 1-ին, 3-րդ և 4-րդ հավելվածների աղյուսակների 2-րդ սյունակում «օրդինատուրա» բառն առաջարկում ենք փոխարինել «քանակը» բառով, քանի որ խոսքը գնում է ընդունելության տեղերի քանակի մասին:	Առաջարկությունն ընդունելի է:	1.Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	2. Նախագծին կից ներկայացված հիմնավորման 6-րդ կետում նշվում է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նախատեսում է ... ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել կլինիկական օրդինատուրայի համար ***95 տեղ***, որից 17-ը՝ Արցախի Հանրապետությանը, 10-ը՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին, 58-ը՝ Առողջապահության նախարարությանը, ***10-ը՝ Պաշտպանության նախարարությանը*** և 50 տեղ ինտերնատուրայի համար: Մինչդեռ նախագծի 4-րդ հավելվածում ՀՀ պաշտպանության նախարարության մասով նախատեսված է պետության կողմից ուսանողական նպաստների ձեվով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի ընդունելության 17 տեղ: Այս առումով նախագծի դրույթներն անհրաժեշտ է վերանայել:	Առաջարկությունն ընդունելի է:	2. Ս/թ հուլիսի 22-ի հմ. 01/06.1/18705-20 գրությամբ նախագիծը ուղարկվել էր ՀՀ պաշտպանության նախարարություն՝ նախագծի հավելվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:

ՀՀ պաշտպանության նախարարություն Օգոստոսի 1-ի թիվ ՊՆ/510/2384-2020 գրություն	Հաշվի առնելով Ֆինանսների նախարարության դիտողությունը, առ այն, որ Պաշտպանության նախարարության համար Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կլինիկական օրդինատուրայում 17 տեղի հատկացումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի կատարման անհրաժեշտության, առաջարկում եմ նշված տեղերից 7-ը կրճատել՝ թողնելով Պաշտպանության նախարարության հատկացվող հետևյալ տեղերը. սրտաբանություն՝ 1 տեղ, էնդոկրինոլոգիա՝ 1 տեղ, ներքին բժշկություն՝ 1 տեղ, քիթ, կոկորդ, ականջաբանություն՝ 1 տեղ, հոգեբուժություն՝ 1 տեղ և ճառագայթային ախտորոշում՝ 5 տեղ:	Առաջարկությունն ընդունելի է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ վարչապետի աշխատակազմ Օգոստոսի 4-ի թիվ 02/11.8/36972-2020 գրություն	Վարչապետի հանձնարարությամբ՝ խնդրում եմ նախագծի վերաբերյալ ստանալ պաշտպանության նախարարության կարծիքը, կցել հանրային քննարկման տեղեկանքը, ինչպես նաև հանել նախագծի 2-րդ կետը:	Դիտողություններն ընդունելի են:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություններ:
Հանրային քննարկում	Նախագիծը 27.07.2020-12.08.2020 ժամանակահատվածում ներկայացված է հանրային քննարկման: Ս/թ օգոստոսի 10-ի դրությամբ նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:		